

կարեւոր դեր մը կատարեցին Երուսաղէմի եւ շրջակայից կրօնական եւ եկեղեցական կեանքին մէջ. ան ո՛չ միայն Եւթիմիոսի եւ Մար-Սարայի նման մեծ դէմքերու կեանքը ուրուագծած է, այլ նաեւ պատկերացուցած է իր ապրած գարուն դաւանաբանական վէճերը եւ վանական յարաբերութիւնները, շահեկան տեսութիւններով. այդ պատճառաւ ձեռնհասներ Սկիւթուպոլսեցին նամակներուցած են Պլուտարքոսին: Այս սիւնակները չեն ներեր Կիւրեղի գրած կենսագրութեան բոլոր մասերը ծանօթացնելու, որուն յունարէն բնագրէն գոտ կը գտնուի նաեւ լատիներէն թարգմանութիւնը, հին տպագրութեամբ: Սկիւթուպոլսեցիին համաձայն, Մար-Սարա վերջապէս իր դաստիարակութիւնը կ'ընդունի Եւթիմիոսի վանքին մէջ, և մեծ համբաւ կ'ըստանայ իր սրբակեաց վարքին, բնական ուշիմութեան եւ անխոնջ գործունէութեան պատճառաւ. տարիքին կատարելութեամբն՝ ան կ'ըլլայ մեծ կազմակերպիչ մը Երուսաղէմի Անապատին և ղեկավար մը հազարաւոր անապատականաց: Ս. Բազիլ պատրիարքները մասնաւոր համակրանք մը կը տածեն անոր հանդէպ և կը յանձնեն անոր զանազան առաքելութիւններ: Բաց ի իր մասնաւոր վանքէն, զոր շինած է 483ին, քառասուն և հինգ տարեկանին, կը հիմնէ նաեւ ուրիշ եկեղեցիներ, այլ եւ այլ առիթներով, ինչպէս կը վկայեն մեր Յայամուտուրքը և պատմիչներ: Իր ստացած կայսերական առատաձեռնութիւններն ու մասնաւոր նպաստները կը յատկացնէր միմիայն աղքատաց և եկեղեցիներու շինութեան. անոր հրաշակերտ մեծ վանքը, որ մինչև այժմ գոյութիւն ունի, կը մնայ իբր հոյակապ կոթող մը՝ հիմնադրին եկեղեցանուէր կեանքին և անխոնջ գործունէութեան, ինչպէս նաև անոր արտակարգ ազդեցութեան, որ կը տարածուէր մինչև բիւզանդական արքունիքը:

Բախտն ունեցանք նոյն անապատասուն ձերուներին հինաւուրց վանքին այցելութիւն մը տալու. հիացումով դիտեցինք և քննեցինք նոյն փառաւոր հաստատութեան ամէն կողմերը. վանքը՝ հոյակապօրէն՝ և լայնանիստ բերդի մը նման նստած է մեծազանգուած ժայռի մը գագաթը, լայն շի մոտերով իբր աշտարակ կը բարձրանայ Կեդրոնի Չորին վրայ: Վանքին երկաթեայ դուռը չմտած հանդիպակաց կողմը կը տեսնուի Կանսլից Աշատրակ ըսուած բերդանման շէնքը, ուր կը հիւրընկալուին կին ու խ-